ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար էլեկտրականության բաշխման ծառայությունների ձեռքբերման նպատակով ԿՊ0068 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հունվարի 8-ին կնքված N ԿՊ0068 պայմանագրում 2018 թվականի հոկտեմբերի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 - ՀՀ Վարչապետի 11.06.2018թ. N 730-Լ որոշում,

Փոփոխության նկարագրություն - Պայմանագրի 6-րդ հավելվածին կից ցանկից հանվել են 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ տողերը,

Փոփոխության հիմնավորում - Պայմանագրի 42-րդ կետով սահմանված դրույթ:

Պատվիրատու՝ ***Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «26» հոկտեմբերի 2018թ.
(կնքման վայրը)

«08» հունվարի 2018 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման թիվ ԿՊ0068 պայմանագրի (այսուհետ՝ **Պայմանագիր**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ **Մատակարար**), ի դեմս գլխավոր տնօրեն Կ.Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի աշխատակազմը (այսուհետ՝ **Սպառող**), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, ով գործում է կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «**Կողմ**», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի** 6-րդ հավելվածին կից ցանկից («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ բաժանորդներ ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմի ստորաբաժանումներ) հանել ստորև նշված բաժանորդական քարտերը.

h/h	ID	Քարտի համարը	Բաժանորդի անվանումը	Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը
4	37416001	6266487	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	Կենտրոն ՏՀՏ «Կենտրոն» տարածք
5	25626032	6000997	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	Մուսալեռ մ/ճ «Արմավիր» էլ.ցանց
6	39727059	9205092	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	Գեղաման մ/ճ «Արովյան» էլ.ցանց
7	11768041	0294084	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	Գեղամա մ/ճ «Սևան» էլ.ցանց
8	37995039	0285189	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	Դեբեդ մ/ճ «Վանաձոր» էլ.ցանց
9	13485024	7014247	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	Աղստև մ/ճ «Իջևան» էլ.ցանց
10	10839034	0291768	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	Արաքս մ/ճ «Եղեգնաձոր» էլ.ցանց
11	16883043	0287423	ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	Տաթև մ/ճ «Կապան» էլ.ցանց

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում **Կողմերի** ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է 2018 թվականի հոկտեմբերի 1-ից, **Կողմերի** միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. Սույն համաձայնագիրը հանդիսանում է **Պայմանագրի** անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր **Կողմի** համար:

Կողմերի հասցեներն ու ստորագրությունները

Մատակարար՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	**Սպառող**՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե
Գտնվելու վայրը՝ ք. Երևան Արմենակյան 127	Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյան (ստորագրություն, անուն, ազգանուն) Կ.Տ.	Գլխավոր քարտուղար՝ Ա. Մկրտչյան (ստորագրություն, անուն, ազգանուն) Կ. Տ.